ԽՈՐԱՑՐԵՔ ՁԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Էկոլոգիական հետքը պահանջարկի գնահատման չափորոշիչ է, որը արտացոլում է Երկիր մոլորակի բնական պաշարների նկատմամբ մարդկու պահանջարկի և մոլորակի էկոլոգիական համակարգերի վերականգնվելու ընդունակության հարաբերությունը:

Էկոլոգիական հետքը ներկայացնում է որպես կենսականորեն արդյունավետ հողային կամ ջրային տարածքի որոշակի քանակ, որը բավարար է մարդու կողմից սպառված բնական պաշարները վերականգնելու և առաջացած թափոնները վնասազերծելու համար:

Տվյալների հավաքագրման դժվարություններից խուսափելու պատճառով թափոնները ներկայացվում են մեկ միասնական տեսակով՝ ածխաթթու գազի քանակով (տոննա), այն ազգային էկոլոգիական հաշվեհամակարգերում օգտագործվում է իբրև ելակետային (քանակական) միավոր: Էկոլոգիական հետքերի, ինչպես նաև կենսակարողության չափման մեծությունը արտահայտվում է գլոբալ հեկտարներով (գհա):

Գլոբալ հեկտարը պայմանական միավոր է և ցույց է տալիս կենսաբանորեն արդյունավետ արտադրական 1 հեկտար տարածքի (նաև ջրային) տարեկան համաշխարհային միջին կենսաարտադրողականությունը:

Էկոլոգիական հետքի վերլուծությունը մարդկության պահանջմունքները համեմատում է բնությունից ռեսուրսների վերականգնման և ծառայություններով ապահովման էկոլոգիական ընդունակության հետ: Դա արվում է՝ գնահատելով օգտագործման համար արդյունավետ հողերը և ջրային տարածքները, որոնք իրենցից ներկայացնում են բնակչության կողմից սպառվող ռեսուրսներ և կլանում են առաջացող թափոնները էկոլոգիական մաքուր տեխնոլոգիաների միջոցով:

Օգտագործելով գնահատման այս ձևը, հնարավոր է թվային տվյալի ձևով ստանալ աջակցություն այն քանակը, որը Երկիր մոլորակի բնակչությանը ունի իր կյանքի տևողության ժամանակահատվածում: Էկոլոգիական հետքը տարբեր պետությունների (ազգերի) համար համեմատվում է նրանց մարդկության զարգացման համաթվով (ինդեքսով):

Էկոլոգիական հետքի վերաբերյալ Առաջին գիտական հրապարակումը իրականացրել է Վիլիամ Ռիսը 1992 թ.: Էկոլոգիական հետք գաղափարը և

հաշվարկման մեթոդաբանությունը մշակվել է Մաթիս Վակերնագելը 1990–1994 թթ.: Իրականում Վակերնագելը և Ռիսը այս հասկացությունը անվանել են «Առանձնահատուկ ընդունակություններ պարունակող», բայց գաղափարը ավելի ակնառու ու հասանելի դարձնելու նպատակով Ռիսը այն անվանեց «էկոլոգիական հետք»: